ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՄԱՏՆՈՒՔԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուզարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ժամանակով մի պառավ ա ըլըմ, մի տղա թոռն ա ունենըմ։ Էդ ռեխեն գնըմ ա շլակով ցախ բերըմ, տանըմ բազարըմ ծախըմ, հաց առնըմ, բերըմ են ուտըմ։
Մի անքամ էլ գնըմ ա ցախը բազարըմ ծախըմ, մի կատու առնըմ, բերըմ տուն։
— Մթա թե շատ լավ ենք ապըրըմ, կատուն էլ բերըմ ես,— չրանըմ ա պառավը,— էդ էլ ավել մի բողազ ա։
Մի անգամ էլ ցախը բերըմ ա, տանըմ բազար։ Տենըմ ա մի օձի ճուտ էլ եշկի միջըմը ծախըմ են։ Ասըմ են.— Լա՛վ բան, լա՛վ բան։
Էդ ըրեխեն առնըմ ա, տանըմ տուն։
Պառավն է՞լ չի խոսըմ, մենակ հարցնըմ ա.— Էդ ուտելու բան չի, ընչի ես առել։
— Դե ծախըմ ին, առա։
Մի անքամ էլ մի մաշկո շան թուլա յա առնըմ։ Պառավը կռվըմ ա հետը.
— Էդ ընչի էս առել, էդ մի բողազ ա, չէ՞։
Էդ թազին էլ ա մենձանըմ, էդ կատուն էլ ա մենձանըմ, օձն էլ՝ դրանց հետ։ Դվորը շարժվըմ են, դա էլ ա շարժվըմ։
Շատ կենալեն, քիչ կենալեն եդը պառավն ասըմ ա.— Տղա ջան, արի հրսանիք իլ։
Օձն ասըմ ա.— Հրսանիք մի ըլի, ես օձերի թաքավորի որդին եմ։ Օձերն ինձ են ման գալի, դուն քու վզին կգձես ու միասին կգնանք։ Օձերի հասարակութինը ինչքան ղի կտան թե՝ «Որգի՞ ես գնըմ, այ տղա», մտիկ չանես, դուզ կգնաս, իմ մերը մի սեղանի նստած կլի, կհրամայի, թե. «Իմ ճուտին ման էկեք, գդեք»։ Քեզ ինչ որ տան, վեր չունես, մի մատնուք ունի, էն վեր կանես։
Հասնըմ են պալատ։ Օձը վեր ա գալի, մոր կուշտը դնըմ։
Մերն ասըմ ա.— Տղա ջան, ի՞նչ ես ուզըմ, ասա, ասելիքդ տամ։
— Ջանիդ սաղութինն եմ ուզըմ։
— Իմ ջանի սաղութինը հեչ, դու քեզ հմա մի բան ուզի, որ տանես։ Ինչ որ ուզըմ ես, ուզի։
— Էդ մատնուքն եմ ուզըմ։
— Չէ՛, սրանից սավայի ինչ որ ուզըմ ես, ուզի։
— Տղեն եդ ա գնըմ, ճուտն էլ եդնիցը։
— Ա՛յ տղա, եդ արի։
Տղեն եդ ա գնըմ, մատնուքը վեր ա ունըմ, գալի։ Դրանով լավ հարստութին ա գդնըմ, լավ շենքեր ա շինըմ, տավար, ոչխար առնըմ։
Մի օր էլ տատն ասըմ ա.— Այ բալա ջան, հերիք ու բոլ ա, ինչքան ես չրչարվեցի, արի հրսանիք անեմ։
Տղեն համաձայնվըմ ա, տատը բերըմ ա հրսանիք անըմ, հարսը բերըմ տուն։
Մի ռավոդ տղեն էդ հարսին ասըմ ա, թե.— Գնըմ եմ գեղամեջը ման գամ։
Գնըմ ա, մատնուքը թողըմ ա սեղանին։ Վաճառականնի են գալի։
Հարսն ասըմ ա.— Կտորը ընչո՞վ կտաք, էս մատնուքով չէք տա՞։
Դրանք մատնուքը վեր են ունըմ, գնըմ։
Վաճառականնին գնըմ են մի ծովի մեջ, կղզըմ լավ շենք են շինըմ։ Դե՛, մատնուքն էլ կախարդական ա, ում ձեռը ընգնի, նա էլ կհարստանա։
Տղեն գալիս ա տուն ու կնգանը թե.— Ո՞ւր ա մատնուքը։

— Ծախել եմ, էրկու թոփ կտոր առել։
Դրանք հլեդ քասըբանըմ են։
Մերը լաց ա ըլըմ.— Այ քոռանամ ես, էս ի՞նչ օղբաթ էլավ։
Թազին լիզու ա ըլըմ, ասըմ.— Այ տղա, վեր կենանք, գնանք։
Կատուն էլ ա ասըմ։
Գնըմ են, գնը՛մ, հասնըմ են էդ ծովի ղրաղը։ Գնըմ են ըտի պայմանավորվըմ։ Կատուն ասըմ ա .— Ես մատնուքը կհանեմ, համա թող շունը չխլի։ Իրա շնութինը կանի, հանկարծ ծովըմը բան-ման կպատահի, վրա կպրծնի, բերնիցը վեր կընգնի։
Գնըմ են կղզի, կատուն տենըմ ա մի մուկ, վրա ա թռչըմ, որ բռնի։ Մուկն ասըմ ա.— Ընչի՞ ես վրա պրծնըմ։
— Մի անգամ էլ որ դու էկար, կուտեմ, արի մի պայման կապենք։
— Ի՞նչ։
— Այ էդ ղութիկըմը մի մատնուք կա, հանի տուր։
Մուկը ծակըմ ա մի քանի օրըմը, մատնուքը տալիս ա կատվին։ Կատուն ուրխանըմ ա, ուրխանալեն գալիս ա թազնի կուշտը, որ վեր կենան գնան։ Համա թազին իրա շնութինն ա անըմ ու մատնուքը ձեռիցը խլըմ ա։ Ծովըմը մի գազան ա ռաստ գալի, թազին «հաֆ» ա անըմ, մատնիքն ընգնըմ ա ջուրը։
Գնըմ են ծովի ղրաղը, կատուն տղին ասըմ ա էս անպիտանը խլեց, գձեց ծովը։
Տղեն ծիլկավը վեր ա ունըմ, գձըմ ծովը, որ շուն ու կտավի բաղդիցը ձուգը հանի։
Մի անքամ ծիլկավը քաշըմ ա, ձուգը չի ըլըմ, երկրորդ անքամ մի ձուգն ա հանըմ։
Կատուն իմաստուն ա ըլրմ, ասըմ ա .— Գլուխը ինձ տու։ Շունն էլ թե.— Ինձ տու։
Տղեն կես ա անըմ, կեսը տալիս ա կատվին, կեսը՝ շանը։ Հենց որ վեր ա գձըմ, շունը խլըմ ա գլուխը։ Արի ու տես մատնուքը դուս ա գալի, տերը վեր ա ունըմ, ուրխանելեն գնըմ։
Գնըմ ա տուն, ինչ տենա, պառավն ու կնիկը սովիցը մեռնըմ են։
Էդ կնգանը ձիու պոչիցը կապըմ ա, վախըմ ա, որ մատնուքը էլի կծախի։ Էլի թազա հրսանիք ա ըլրմ, հարստանըմ։